ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«-----» հոկտեմբերի 2011թ. **N------ -Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆԻ «ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ կետով և 13-րդ հոդվածի 2-րդ կետի «դ» ենթակետով՝

Երևան քաղաքի ավագանին *որոշում է.*

1. Հաստատել Երևանի «Ավ. Իսահակյանի անվան կենտրոնական գրադարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխությունը /կցվում է/։

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին ապահովել կազմակերպության կանոնադրության փոփոխության պետական գրանցման հետ կապված անհրաժեշտ գործառույթների և ձևակերպումների իրականացումը։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ- ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆԻ «ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևանի «Ավ. Իսահակյանի անվան կենտրոնական գրադարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ փոփոխություններ կատարելու մասին» Երևանի ավագանու որոշման ընդունումը պայմանավորված է «Ավ. Իսահակյանի անվան կենտրոնական գրադարան»-ին հնարավորություն ընձեռելու ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու արդյունքում ավելացնելու սեփական եկամուտները:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆԻ «ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևանի «Ավ. Իսահակյանի անվան կենտրոնական գրադարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ
«ԵՐԵՎԱՆԻ «ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևանի «Ավ. Իսահակյանի անվան կենտրոնական գրադարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևան քաղաքի 2011 թվականի բյուջեում եկամուտների և ծախսերի փոփոխություն չի նախատեսվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Տպագրված է ընդամենը 5 օրինակ
Բաղկացած է 8 թերթից

Օրինակ ---1---

Հ Ա Ս Տ Ա Տ Վ Ա Ծ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
--- .--- . 2011թ. թիվ ------- Ա
որոշմամբ

ՀՀ Երևանի քաղաքապետ՝

_____ Կ.Կարապետյան

Գ Ր Ա Ն Ց Վ Ա Ծ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ
ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ Կենտրոն
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺՆԻ ԿՈՂՄԻՑ

գրանցման N 28621007484
վկայական N 03Ա087100
ՀՎՀՀ 02512138
«10» 02. 2010թ.

Թիվ ——— փոփոխությունը գրանցված է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի Կենտրոն տարածքային բաժնի կողմից
«——» ——— 2011թ.

---------- Տ/Բ պետ՝

_____ ----------

«ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ Ա Ն

փոփոխություն
2011 թվական

ԵՐԵՎԱՆԻ «ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Երևանի քաղաքապետարանի «Ավ. Իսահակյանի անվան կենտրոնական գրադարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության նոր խմբագրությամբ կանոնադրության 2-րդ կետի 2.2 կետը լրացնել դ/-ճ/ ենթակետերով հետևյալ բովանդակությամբ՝

դ/ գրավաճառ ծառայությունների կազմակերպում,
ե/ պատճենահանման ծառայությունների կազմակերպում,
զ/ կազմարարական ծառայությունների մատուցում,
է/ ընթերցասրահի ֆոնդերից երեկոյան և հանգստյան օրերին գրականության սպասարկում,
ը/ լեզուների ուսուցման դասընթացներ,
թ/ տեսաֆիլմերի և տեսանյութերի տրամադրում՝ վարձակալության հիմունքներով,
ժ/ տարածքի տրամադրում՝ վարձակալության հիմունքներով,
ի/ ֆիլմերի ցուցադրություն,
լ/ մատենագիտական և տեղեկատվական ծառայություններ,
խ/ ինտերնետ /համացանց/ ծառայությունների մատուցում,
ծ/ փաստաթղթերի տրամադրում այլ գրադարանների հավաքածուներից և այլ գրադարաններին,
կ/ գրենական պիտույքների, գրասենյակային ապրանքների, հուշանվերների վաճառք,
հ/մասնագիտական ուսումնական հաստատությունների արտադրական պրակտիկայի կազմակերպում,
ձ/ ընթերցողական տոմսի տրամադրում վճարովի հիմունքներով,
ղ/ գրականության ուշացման և կրիչը վնասելու դեպքում փոխհատուցման և տույժի սահմանում։

Սույն փոփոխությունը հանդիսանում է 10.02.2010թ. պետական ռեգիստրում գրանցված կանոնադրության անբաժանելի մասը։